թեան, զպապա Տաւուտ, և զոմանս յայլազգեաց, և ե-
հարց ցնոսա. թէ արդարեւ ըստ զօրութեան վաւերական
գրոց՝ կատարե՞ն Հայք զպաշտօնս իւրեանց 'ի դերեզմանի
Ս. Կուսին, և նոքա ասեն՝ այո՛. զի ունին անդ յատկա-
ցեալ տեղիս, և սահմանեալ օրս և ժամանակս. գնան անդ
միաբանք, ուխտաւորք և ժողովուրդք նոցա առանց հա-
կառակութեան ուրուք, որպէս հրամայեալ են առաջին
թագաւորք։ Լուեալ դատաւորին զայնոսիկ, հրաման ետ
Հայոց անխափան կատարել զպաշտամունս իւրեանց ըստ
առաջին սովորութեան. և պատուէր ետ Լատինաց չընդ-
դիմանալ Հայոց։

Այլազգիք Երուսաղէմի ոչ երբէք դադարէին 'ի հակա-
ռակութենէ իւրեանց, որպէս 'ի սմին ամի Ցաղլալլահ ա-
նուն ոմն՝ 'ի ժառանգաց Շէյխ Սէմէտ տէճենեայ տմրաստ-
ման եղեւ զՅովհաննէս վարդապետէն, թէ դերեզմանա-
տունն և տեղին Ս. Փրկչի վանաց լեալ իսկ 'ի կալուա-
ծոց հաւուն իւրոյ, և խնդրեաց 'ի դատաւորէն պատուէր
տալ Հայոց յանձնել ինքեան զայնոսիկ տեղիս, և կամ հա-
տուցանել վարձս ամ ըստ ամէ։ Կոչեցաւ Յովհաննէս վար-
դապետ տեղակալ, այլ 'ի բաց մերժեաց զխնդիրս նորա,
հաստատելով վաւերական գրովք թէ տեղիքն այնոքիկ
սեփհական են ազգին Հայոց, և ժառանգեալ են 'ի սկզբանէ
անտի, ուր թաղեն նաեւ զննջեցեալս իւրեանց. Շէյխ
Սալէհ յարոյց զխնդիրս զայս յաւուրս Անդրիաս Պատրի-
արքի և 'ի թարգմանութեան Աստուածատուր վարդապե-
տի, այլ ոչ կարաց հաստատել և չահիլ ինչ։ Իբրեւ յայտնի
եղեւ ստութիւն նորա, մերժեցաւ յատենէ դատաւորին, և
վերստին հաստատեցաւ իրաւունքն Հայոց։ Առաջի արար
Յովհաննէս զդրեանսն, և ընթերցեալ դատաւորին, մեր-
ժեաց զՑաղլալլահ յատենէ իւրմէ իբրեւ զստախօս, և վե-
րըստին գրով հաստատեաց զժառանգութիւնս Հայոց։
(1714)։